դէպ հայի ի մեծ լեռնն Տաւրոսի, որ եւ անուանեալ յաճախապաշտաման տեղեացն Ցաշտիշատ»: Երրորդն էր, նոյն տեղում՝ «մեհեանն անուանեալ Աստղկան դից, սենեակ Վահագնի կարդացեալ ըստ յունականին, որ է ինքն Ափրոդիտէ» (էջ 469): Մի ուրիշ տեղ (էջ 83), Վահագն յիշւում է Արամազդին եւ Անահիտի հետ միասին: Տրդատ թագաւորը բարեմաղթում է «լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ», «Խնամակալութիւն՝ յԱնահիտ տիկնոջէ» եւ՝ «քաջութիւն ի քաջն Վահագնէ»:

Հայոց պանթէոնի կատարին կեցած է «մեծն արին Արամազդ», «արարիչն երկնի եւ երկրի», «հայր անուանեալ դիցն ամենայնի»:

Նոյն պանթէոնի միւս անդամներն եւս չեն մոռացուած. «Ցիւր՝ դիք դպրի դիտութեան քրմացն, անուանեալ դիւան գրչի Որմզդի ուսման ճարտարութեան մեհեան» (էջ 452), «Արամազդի որդի անուանեալ» Միհրը՝ Բագայարիճ աւանի իր մեհեանով, «Ամանորայ, ամենարեր նորոց պտղոց ածնից հիւրընկալ» Վանատուրը, «զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին՝ յուրախութեան Նաւասարդ աւուր»: Յետոյ՝ Դարանաղեաց գաւառի Թորդան գիւղում գտնուող «մեհեան անուանեալ սպիտակփառ դիցն Բարշիմնիա» եւ Վերջապէս «Նանէական մեհեանն, զոտերն Արամազդայ, ի Թիլն աւանի»:

Հետաքրքրական է նաեւ իմանալ Ագաթանգեղոսի հայեացքը հեթանոսական աստուածների ծագման մասին: Ս. Գրիգորի բերնով խօսելով՝ այսպէս է բացատրում նա: «Ա՛յն, ինչ որ դու մեծ Անահիտ տիկին ես անուանում, ժամանակով՝ մարդի՛կ են եղած: Տարուած դիցապաշտ կախարդութեամբ, ինչպէս որ էին մարդիկ այն ժամանակները, մեհեաններ շինեցին, արձաններ կանգնեցրին եւ պաշտել սկըսան: Եւ սակայն, զոքա (այդ աստուածները) որ ո՛չ իսկ են, ո՛չ չար բան անել կարող են, եւ ո՛չ բարի բան, ոչ պատուել կարող են իրենց պաշտողներին, ոչ էլ անարգել՝ իրենց թշնամանողներին»:

Լուսաւորիչ եւ Տրդատ ձեռք-ձեռքի տըուած՝ աւերում, հիմնայատակ են անում Հայոց հին աստուածների մեհեանները, կրօնական այս կամ այն կենտրոնում — Աշտիշատում, Անի ամրոցում, Երէց և Թիլ աւաններում, Թորդան աւանում (Դարանաղի), Բագայարիճում, Բագուանում, Դերջանում եւ Աշտիշատում:

Ո՛րքան նման են նաեւ հետեւեալ տողերը (էջ 459) Կորիւնի այն խօսքերին, որ ասում են՝ Գողթան բնակիչների մասին:

Ագաթանգեղոսը Դերջանի ժողովուրդի մասին է ասում, որոնց մօտ քարոզչական նպատակով գնացել էր Լուսաւորիչ, «զերծուցանել զնոսա ի գարշելի դիւցական սատանայակիր բարուցն ճիւաղութենէ: Զխուժադուժ կողմանսն աշակերտելոյ, զխոշորագոյն եւ զխեցեկագոյն բարս հեթանոսութեան շրջել ի դղասուութիւն աստուածուսոյց իմաստութեան»: Դարանաղեաց գաւառում քրիստոնէութիւնը տարածուելուց յետոյ եւս՝ հին կրօնի ոգիները, «դիւացն վիսատական լինելով անկանել ի կողմանս խաղտեաց»:

Ինչպէս Գողթն գաւառում եւ «Մարաց», այնպէս նաեւ Խաղտեաց կողմերում հայոց հին աստուածները ըստ երեւոյթին դեռ բաւական ժամանակ շարունակել են ապրել ժողովուրդի գիտակցութեան մէջ: Նոյն այդ Խաղտեաց լեռներում էր նաեւ, որ Հայաստանի նախաբնիկները, Խալդերը (որից եւ՝ «Խաղտիք»), քրիստոնէութիւնից յետոյ եւս երկար ժամանակ պահեցին իրենց դոյութիւնը:

* * *

Փաւստոս Բուզանդի հանդէպ արժանի դըՆահատութիւնը ցոյց չի տուել հայ պատմագրութիւնը, Ղազար Փարպեցուց սկսած մինչեւ Միքայէլ Չամչեան եւ մինչեւ նոր ժամանակները:

Բայց ինչ որ բացասական կողմ է համարուել միշտ Փաւստոսի Հայոց պատմութեան համար, այդ կազմում է իսկապէս նրա գրական յատկանիշը: Փաւստոսի Պատմութիւնը զուտ քաղաքական բնոյթ չի կրում, ինչպէս որ են մեծ մասով ուրիշ հեղինակների գործերը: Նա առաւելապէս ներկայացնում է չորրորդ դարու հայոց ներքին կեանքը, ինչպէս որ նա պատկերացել է հինգերորդ դարու հեղինակի աչքին: Փաւստոսի աղրիւրները առաւելապէս ժողովրդական աւանդութիւններն ու զրոյցներն են: Այդ չի խանդարում հարկաւ ընդունելու, որ